

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 24

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Ա. Հունանյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Սաֆարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը, ինչպես նաև Աշտարակ համայնքի բնակիչ Հ. Գևորգյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/*

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/*

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/*

8. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**/1/ Օրակարգը հաստատվել է 8 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2019 թվականի բյուջեն:

Ձեկուցողը, մասնավորապես, նշեց այն համամասնությունը, ըստ որի ձևավորվել է բյուջեի նախագիծը: Վահանյանն իր խոսքում մանրամասն անդրադարձ կատարեց նաև բյուջեի եկամտային և ծախսային մասերին՝ նշելով եկամուտների աղբյուրները, ինչպես նաև ծախսային մասի բաշխումները:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ս. Օվոյանը, Կ. Շահագիզյանը, Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Շ. Վահանյանի կողմից:

**8 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի վարչական տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Ձեկուցողը նշեց, որ 2018 թվականի հետ համեմատած, ըստ էության, դրույքաչափերը փոփոխության չեն ենթարկվել: Տեղական վճարների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Կ. Շահագիզյանը, Ա. Սարգսյանը, որոնց հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Շ. Վահանյանի կողմից:

**8 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո, ինչպես նաև ցուցակում ընդգրկված են սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ:

Ձեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

**8 - ԿՈՐՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Ա. Մնացականյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, թույլատրել տրամադրելու /մրցույթով/ կառուցապատման իրավունքով որոշ հողամասեր և դրա համար սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողը միաժամանակ նշեց, որ հողամասերի հատակագծերը կցված են որոշման նախագծին:

**8 -ԿՈՐՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

**8 - ԿՈՐՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց հավանություն տալ Աշտարակ քաղաքի 02-001-0135-0018 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասից 0.02հա հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների փոփոխելու վերաբերյալ առաջարկությանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

**8 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի դեկտեմբերի 25-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

**ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**

**ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ**

**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**

**ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**